



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի չորրորդ եռամսյակում (վերլուծություն)

2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 47462 գործարք, որոնց քանակը 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 9.6 %-ով, իսկ 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 6.2 %-ով:

2016 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12549 օտարման գործարքի 73.5 %-ը կազմել է առուվաճառքը, 26.0 %-ը՝ նվիրատվությունը և 0.5 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.4 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի չորրորդ եռամսյակում, 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 0.9 %-ով, իսկ 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 14.1 %-ով:

2016 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.9 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի չորրորդ եռամսյակում, 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 0.7 %-ով, իսկ 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 11.2 %-ով:

2016 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|--|--------------------------|--------------------------|-------------------------|
| | Չորրորդ եռամսյակ 2015 թ. | Չորրորդ եռամսյակ 2016 թ. | Երրորդ եռամսյակ 2016 թ. |
| Կենտրոն | 428000 | 428250 | 428250 |
| Արաբկիր | 356700 | 357400 | 357350 |
| Քանաքեռ-Զեյթուն | 282800 | 283300 | 283150 |
| Նոր Նորք | 253600 | 254400 | 254300 |
| Ավան | 261100 | 262000 | 261800 |
| Էրեբունի | 252200 | 252500 | 252350 |
| Շենգավիթ | 257350 | 258050 | 257700 |
| Դավթաշեն | 276300 | 277100 | 276800 |
| Աջափնյակ | 250400 | 251400 | 251100 |
| Մալաթիա-Սեբաստիա | 243600 | 244300 | 244200 |
| Նուբարաշեն | 157000 | 157600 | 157450 |
| Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից) | 274500 | 275100 | 274950 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 0.1 %-ով:

2016 թվականի չորրորդ եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 1028 բնակարան, որի քանակը, 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 3.0 %-ով, իսկ 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 6.5 %-ով:

2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|-------------|-------------|--------------------------------|--------------------------------|-------------------------------|
| | | Չորրորդ եռամսյակ 2015 թ. | Չորրորդ եռամսյակ 2016 թ. | Երրորդ եռամսյակ 2016 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 116000 | 116200 | 116050 |
| | Ապարան | 58050 | 58900 | 58500 |
| | Թալին | 66300 | 66900 | 66850 |
| Արարատ | Արտաշատ | 98150 | 99200 | 98900 |
| | Մասիս | 115800 | 115800 | 115800 |
| | Վեդի | 101500 | 101750 | 101750 |
| | Արարատ | 77100 | 77750 | 77550 |
| Արմավիր | Վաղարշապատ | 154100 | 154200 | 154200 |
| | Արմավիր | 121200 | 121250 | 121250 |
| | Մեծամոր | 87550 | 87600 | 87600 |
| Գեղարքունիք | Սևան | 99400 | 99400 | 99400 |
| | Գավառ | 60300 | 60800 | 60600 |
| | Մարտունի | 107700 | 107700 | 107700 |
| | Վարդենիս | 45000 | 45400 | 45300 |
| | Ճամբարակ | 28750 | 28800 | 28800 |
| | Վանաձոր | 88500 | 88600 | 88600 |
| Լոռի | Ստեփանավան | 74600 | 74900 | 74750 |
| | Սպիտակ | 99800 | 99950 | 99850 |
| | Ալավերդի | 55400 | 55950 | 55900 |
| | Տաշիր | 47350 | 47400 | 47400 |
| | Թումանյան | 11000 | 11000 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 | 8000 |
| | Ախթալա | 20500 | 20500 | 20500 |
| | Աբովյան | 155100 | 155150 | 155150 |
| Կոտայք | Նոր Հաճն | 128550 | 128550 | 128550 |
| | Բյուրեղավան | 108200 | 108250 | 108250 |
| | Եղվարդ | 109500 | 110000 | 109900 |
| | Հրազդան | 63800 | 63900 | 63900 |
| | Ծաղկաձոր | 292400 | 292400 | 292400 |
| | Չարենցավան | 85500 | 85500 | 85500 |
| | Գյումրի | 109250 | 109450 | 109450 |
| Շիրակ | Արթիկ | 66900 | 67400 | 67400 |
| | Մարալիկ | 40900 | 41150 | 41100 |
| | Գորիս | 123250 | 124100 | 123850 |
| Սյունիք | Կապան | 94350 | 95700 | 95300 |
| | Սիսիան | 92000 | 92400 | 92200 |
| | Մեղրի | 82500 | 83600 | 83200 |
| | Ագարակ | 47400 | 47850 | 47750 |
| | Քաջարան | 94650 | 95000 | 94950 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| | Վայոց ձոր | 95000 | 95100 | 95100 |
| Տավուշ | Եղեգնաձոր | 125800 | 126500 | 126300 |
| | Զերմուկ | 112950 | 113300 | 113300 |
| | Դիլիջան | 115200 | 115700 | 115600 |
| | Իջևան | 118450 | 118600 | 118550 |
| | Բերդ | 60300 | 60600 | 60450 |
| Այրում | Նոյեմբերյան | 50200 | 50500 | 50400 |
| | Այրում | 31850 | 31900 | 31900 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2016 թվականի չորրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 1214 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 340 գործարք, մարզերում՝ 874 գործարք: 2016 թվականի չորրորդ եռամսյակում, 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 11.7 %-ով, ընդ որում, Երևանում՝ 3.7 %-ով, մարզերում՝ 15.2 %-ով, իսկ 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3.7 %-ով, ընդ որում, Երևանում՝ 21.3 %-ով, իսկ մարզերում՝ աճել 5.4 %-ով:

2016 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|--------------------------------------|--------------------------|--------------------------|-------------------------|
| | Չորրորդ եռամսյակ 2015 թ. | Չորրորդ եռամսյակ 2016 թ. | Երրորդ եռամսյակ 2016 թ. |
| Կենտրոն | 476100 | 476350 | 476350 |
| Արաբկիր | 383000 | 383200 | 383200 |
| Քանաքեռ-Զեյթուն | 295000 | 295300 | 295000 |
| Նորք-Մարաշ | 319200 | 319500 | 319300 |
| Ավան | 270500 | 270750 | 270600 |
| Էրեբունի | 239750 | 239900 | 239750 |
| Շենգավիթ | 255000 | 255150 | 255000 |
| Դավթաշեն | 276000 | 276200 | 276100 |
| Աջափնյակ | 250050 | 250300 | 250100 |
| Մալաթիա-Սեբաստիա | 238000 | 238200 | 238100 |
| Նուբարաշեն | 150800 | 150800 | 150800 |
| Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից) | 286700 | 286900 | 286800 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի չորրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 0.03 %-ով:

2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|-------------|-------------|--------------------------------|--------------------------------|-------------------------------|
| | | Չորրորդ եռամսյակ 2015 թ. | Չորրորդ եռամսյակ 2016 թ. | Երրորդ եռամսյակ 2016 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 136200 | 136250 | 136250 |
| | Ապարան | 60050 | 60050 | 60050 |
| | Թալին | 69250 | 69250 | 69250 |
| Արարատ | Արտաշատ | 100000 | 100100 | 100100 |
| | Մասիս | 115100 | 115100 | 115100 |
| | Վեդի | 102300 | 102300 | 102300 |
| | Արարատ | 88000 | 88000 | 88000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 153100 | 153150 | 153150 |
| | Արմավիր | 107000 | 107000 | 107000 |
| Գեղարքունիք | Սևան | 94950 | 94950 | 94950 |
| | Գավառ | 57100 | 57100 | 57100 |
| | Մարտունի | 96100 | 96200 | 96200 |
| | Վարդենիս | 41100 | 41150 | 41150 |
| | Ճամբարակ | 31100 | 31100 | 31100 |
| | | | | |
| Լոռի | Վանաձոր | 100800 | 100900 | 100900 |
| | Ստեփանավան | 91100 | 91200 | 91200 |
| | Սպիտակ | 114000 | 114050 | 114050 |
| | Ալավերդի | 50200 | 50300 | 50300 |
| | Տաշիր | 51900 | 51900 | 51900 |
| | Թումանյան | 12000 | 12000 | 12000 |
| | Շամլուղ | 14000 | 14000 | 14000 |
| | Ախթալա | 30000 | 30000 | 30000 |
| Կոտայք | Աբովյան | 157300 | 157350 | 157350 |
| | Նոր Հաճն | 129800 | 129800 | 129800 |
| | Բյուրեղավան | 120500 | 120500 | 120500 |
| | Եղվարդ | 116100 | 116100 | 116100 |
| | Հրազդան | 82600 | 82600 | 82600 |
| | Ծաղկաձոր | 305000 | 305000 | 305000 |
| | Չարենցավան | 83000 | 83000 | 83000 |
| Շիրակ | Գյումրի | 119250 | 119350 | 119300 |
| | Արթիկ | 63300 | 63450 | 63450 |
| | Մարալիկ | 52000 | 52000 | 52000 |
| Սյունիք | Գորիս | 130000 | 130050 | 130050 |
| | Կապան | 100650 | 100800 | 100750 |
| | Սիսիան | 96500 | 96500 | 96500 |
| | Մեղրի | 84600 | 84700 | 84650 |
| | Ագարակ | 46900 | 47000 | 46950 |
| | Դաստակերտ | 11610 | 11610 | 11610 |
| Վայոց ձոր | Վայք | 90150 | 90150 | 90150 |
| | Եղեգնաձոր | 116750 | 116750 | 116750 |
| | Զերմուկ | 131300 | 131300 | 131300 |
| Տավուշ | Դիլիջան | 115400 | 115800 | 115700 |
| | Իջևան | 123200 | 123250 | 123250 |
| | Բերդ | 60100 | 60100 | 60100 |
| | Նոյեմբերյան | 48300 | 48300 | 48300 |
| | Այրում | 36250 | 36250 | 36250 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ

Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ համեմատ աճել է 0.1 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել է 4270 միավոր (2407.74 հա) հող, որից Երևանում՝ 259 միավոր (23.00 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 2567 միավոր (2180.87 հա), որից Երևանում՝ 13 միավոր (2.92 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 1192 միավոր (120.80 հա), որից Երևանում՝ 138 միավոր (6.51 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 396 միավոր (37.99 հա), որից Երևանում՝ 100 միավոր (9.70 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 45 միավոր (20.11 հա), որից Երևանում՝ 8 միավոր (3.87 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 28 միավոր (11.89 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 39 միավոր (3.68 հա),
- ջրային հող՝ 3 միավոր (32.40 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականի չորրորդ եռամսյակում օտարված հողերից 3513 միավորի (2022.82 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 213 միավոր (17.29 հա), նվիրատվության գործարք՝ 730 միավոր (359.36 հա), որից Երևանում՝ 36 միավոր (3.15 հա) և փոխանակության գործարք՝ 27 միավոր (25.56 հա), որից Երևանում՝ 10 միավոր (2.56 հա):

Հանրապետությունում 2016 թվականի չորրորդ եռամսյակում 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 18.4 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 16.3 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 19.8 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 11.6 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Լոռու մարզում՝ 664.08 հա, որից 656.27 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 18.8 %-ը կամ 662 միավորը (226.90 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 70 միավոր (1.59 հա), իսկ 80.1 %-ը կամ 2814 միավորը (1233.93 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 142 միավոր (15.70 հա): 2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 37 գործարք (0.44 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացված է 2016 թվականի չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|-------------|---|--------------|----------------------------------|--------------|-------------------------------------|--------------|-------------------------------|--------------|------------------------------------|--------------|----------------------------------|--------------|-------------------------------------|--------------|-------------------------------|--------------|
| | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղ. նշանակության հողեր | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | Հասարակական կառուցապատ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 0 | 0.00 | 2 | 0.04 | 33 | 0.84 | 35 | 0.71 | 8 | 2.03 | 5 | 3.60 | 83 | 4.10 | 46 | 5.98 |
| Արագածոտն | 43 | 62.70 | 1 | 0.48 | 5 | 0.08 | 10 | 0.48 | 171 | 153.36 | 1 | 0.01 | 58 | 27.29 | 5 | 0.40 |
| Արարատ | 25 | 16.73 | 2 | 0.04 | 21 | 0.83 | 11 | 0.80 | 301 | 127.85 | 2 | 3.84 | 125 | 11.84 | 19 | 0.21 |
| Արմավիր | 12 | 14.37 | 3 | 0.20 | 1 | 0.08 | 4 | 0.04 | 257 | 191.47 | 2 | 1.08 | 161 | 17.06 | 12 | 0.10 |
| Գեղարքունիք | 4 | 0.25 | 1 | 1.13 | 10 | 0.37 | 29 | 1.95 | 240 | 115.11 | 1 | 0.10 | 80 | 9.55 | 13 | 0.57 |
| Լոռի | 3 | 6.62 | 6 | 0.98 | 23 | 0.31 | 28 | 0.29 | 254 | 129.69 | 1 | 0.21 | 15 | 0.99 | 15 | 4.83 |
| Կոտայք | 35 | 53.49 | 1 | 4.80 | 77 | 1.77 | 25 | 0.67 | 355 | 213.52 | 0 | 0.00 | 151 | 13.92 | 17 | 3.23 |
| Շիրակ | 17 | 10.05 | 0 | 0.00 | 21 | 0.48 | 5 | 0.11 | 137 | 92.94 | 2 | 0.12 | 15 | 1.79 | 6 | 0.23 |
| Սյունիք | 7 | 2.46 | 2 | 1.01 | 12 | 0.85 | 5 | 2.51 | 86 | 48.86 | 0 | 0.00 | 37 | 3.18 | 6 | 0.08 |
| Վայոց ձոր | 41 | 21.86 | 0 | 0.00 | 1 | 0.18 | 7 | 0.12 | 48 | 25.26 | 0 | 0.00 | 8 | 1.04 | 5 | 0.16 |
| Տավուշ | 17 | 11.20 | 3 | 0.90 | 15 | 0.63 | 19 | 0.91 | 35 | 15.62 | 2 | 0.32 | 15 | 1.30 | 5 | 0.44 |
| Ընդամենը | 204 | 199.73 | 21 | 9.58 | 219 | 6.42 | 178 | 8.59 | 1892 | 1115.71 | 16 | 9.28 | 748 | 92.06 | 149 | 16.23 |

Ստորև ներկայացված է 2016 թվականի չորրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Վաճառք աճուրդով | | | | | | | | | |
|-------------|----------------|--------------|----------------------------------|--------------|-------------------------------------|--------------|-------------------------------|--------------|-----------------|--------------|---------------------------|--------------|---------------------------|--------------|-------------------------------------|--------------|-------------------------------|--------------|
| | Ընդամենը | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանակության հողեր | | Գյուղ. նշանակության հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | | | | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 33 | 0.47 | 2 | 0.04 | 21 | 0.18 | 10 | 0.25 | 37 | 1.12 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 12 | 0.66 | 25 | 0.46 |
| Արագածոտն | 3 | 0.16 | 0 | 0.00 | 1 | 0.04 | 2 | 0.12 | 52 | 57.94 | 39 | 57.06 | 1 | 0.48 | 4 | 0.04 | 8 | 0.36 |
| Արարատ | 2 | 0.03 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.03 | 57 | 18.37 | 25 | 16.73 | 2 | 0.04 | 21 | 0.83 | 9 | 0.77 |
| Արմավիր | 1 | 0.004 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.004 | 15 | 11.80 | 8 | 11.48 | 3 | 0.20 | 1 | 0.08 | 3 | 0.04 |
| Գեղարքունիք | 12 | 0.22 | 0 | 0.00 | 3 | 0.08 | 9 | 0.14 | 31 | 3.45 | 3 | 0.22 | 1 | 1.13 | 7 | 0.29 | 20 | 1.81 |
| Լոռի | 19 | 0.135 | 1 | 0.005 | 8 | 0.05 | 10 | 0.08 | 41 | 8.05 | 3 | 6.62 | 5 | 0.97 | 15 | 0.26 | 18 | 0.20 |
| Կոտայք | 33 | 0.61 | 0 | 0.00 | 31 | 0.42 | 2 | 0.19 | 104 | 58.53 | 34 | 51.90 | 1 | 4.80 | 46 | 1.35 | 23 | 0.48 |
| Շիրակ | 9 | 0.16 | 0 | 0.00 | 6 | 0.09 | 3 | 0.07 | 21 | 4.85 | 4 | 4.42 | 0 | 0.00 | 15 | 0.39 | 2 | 0.04 |
| Սյունիք | 8 | 0.155 | 0 | 0.00 | 6 | 0.15 | 2 | 0.005 | 13 | 5.15 | 2 | 0.93 | 2 | 1.01 | 6 | 0.70 | 3 | 2.51 |
| Վայոց ձոր | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 49 | 22.16 | 41 | 21.86 | 0 | 0.00 | 1 | 0.18 | 7 | 0.12 |
| Տավուշ | 1 | 0.002 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.002 | 52 | 13.61 | 16 | 11.17 | 3 | 0.90 | 15 | 0.63 | 18 | 0.91 |
| Ընդամենը | 121 | 1.95 | 3 | 0.05 | 76 | 1.01 | 42 | 0.89 | 472 | 205.03 | 175 | 182.39 | 18 | 9.53 | 143 | 5.41 | 136 | 7.70 |

2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 29 գործարք (17.34 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի չորրորդ եռամսյակում, 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 38.4%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 2.6 %-ով, իսկ մարզերում՝ 40.2 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 45.1 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 45.0 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 31.7 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 14.3 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի չորրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ | | | | |
|--------------------------------------|---|--------------|--|--------------|--------|---|--------------|---|--------------|--------|
| | Միավորների քանակ | Մավերես (հա) | պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մավերես (հա) | շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 38 | 41.80 | 50.6 | 922.3 | 280.1 | 75 | 64.90 | 365.0 | 12000.0 | 3351.0 |
| Ապարան | | | | | | 12 | 9.11 | 86.5 | 2727.3 | 643.1 |
| Թալին | 1 | 15.26 | 275.0 | 275.0 | 275.0 | 53 | 35.25 | 93.6 | 5494.5 | 699.5 |
| Ծաղկահովիտ | | | | | | 24 | 43.33 | 79.5 | 1000.0 | 412.2 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 6 | 6.31 | 150.1 | 856.1 | 505.2 | 99 | 39.96 | 335.1 | 10833.3 | 2697.4 |
| Մասիս | 4 | 1.52 | 82.3 | 256.7 | 161.8 | 73 | 28.87 | 200.0 | 11904.8 | 3403.4 |
| Վեդի | 15 | 8.90 | 80.8 | 18333.3 | 982.1 | 128 | 58.21 | 207.0 | 10795.1 | 2021.8 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 3 | 0.40 | 63.0 | 168.5 | 114.3 | 118 | 81.03 | 294.3 | 9090.0 | 1408.1 |
| Բաղրամյան | | | | | | 40 | 64.00 | 90.6 | 2561.1 | 880.0 |
| Վաղարշապատ | 5 | 11.08 | 61.6 | 550.0 | 120.8 | 94 | 42.80 | 444.4 | 11764.7 | 1987.8 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 2 | 0.18 | 540.0 | 4900.0 | 2720.0 | 165 | 46.51 | 199.8 | 1875.0 | 515.1 |
| Ճամբարակ | | | | | | 2 | 0.99 | 60.5 | 953.3 | 351.3 |
| Մարտունի | 1 | 0.04 | 17.8 | 17.8 | 17.8 | 23 | 6.99 | 51.1 | 2850.0 | 760.0 |
| Սևան | | | | | | 35 | 22.84 | 52.2 | 2134.8 | 357.5 |
| Վարդենիս | | | | | | 15 | 37.78 | 41.2 | 2575.1 | 370.7 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 15 | 9.43 | 170.4 | 6424.2 | 551.8 |
| Գուգարք | 1 | 0.62 | 206.9 | 206.9 | 206.9 | 47 | 9.48 | 234.6 | 6065.9 | 816.7 |
| Սպիտակ | | | | | | 1 | 0.25 | 250.0 | 5555.5 | 675.0 |
| Ստեփանավան | | | | | | 11 | 7.40 | 90.6 | 1686.6 | 401.7 |
| Տաշիր | 2 | 6.00 | 552.0 | 552.0 | 552.0 | 163 | 92.56 | 45.3 | 1384.4 | 185.8 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 12 | 33.51 | 68.5 | 5833.3 | 1299.7 | 85 | 66.16 | 279.3 | 11942.7 | 4061.1 |
| Եղվարդ | 15 | 13.42 | 136.9 | 1755.0 | 775.6 | 233 | 123.76 | 174.4 | 11971.8 | 2555.5 |
| Հրազդան | 7 | 4.97 | 114.6 | 1108.0 | 495.9 | 35 | 18.86 | 130.5 | 10256.4 | 1026.2 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 1 | 2.62 | 143.4 | 143.4 | 143.4 | 51 | 26.85 | 252.0 | 1693.1 | 690.0 |
| Ամասիա | | | | | | 1 | 0.41 | 40.9 | 261.0 | 141.3 |

| | | | | | | | | | | |
|-----------------|----|-------|--------|--------|--------|----|-------|-------|---------|--------|
| Անի | 1 | 0.13 | 294.7 | 294.7 | 294.7 | 24 | 18.89 | 110.6 | 546.9 | 465.8 |
| Աշոցք | | | | | | 13 | 16.98 | 58.5 | 215.8 | 140.2 |
| Արթիկ | 2 | 1.67 | 726.1 | 759.7 | 742.9 | 44 | 29.35 | 79.4 | 1428.6 | 539.8 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | 1 | 0.43 | 1000.0 | 1000.0 | 1000.0 | 26 | 16.42 | 92.6 | 1023.2 | 739.3 |
| Կապան | | | | | | 20 | 13.85 | 120.0 | 841.6 | 459.2 |
| Մեղրի | 1 | 0.50 | 460.0 | 460.0 | 460.0 | 7 | 1.01 | 193.0 | 3000.0 | 816.1 |
| Սիսիան | | | | | | 32 | 17.47 | 46.3 | 1977.4 | 557.1 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 31 | 15.15 | 36.2 | 647.3 | 223.0 | 39 | 18.20 | 125.0 | 10000.0 | 1773.3 |
| Վայք | 10 | 6.71 | 34.5 | 631.2 | 95.9 | 9 | 7.05 | 58.8 | 1430.7 | 625.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 22 | 5.53 | 213.3 | 3783.8 | 700.5 |
| Իջևան | 16 | 11.17 | 43.7 | 1200.0 | 381.7 | 4 | 5.04 | 267.5 | 9454.5 | 1576.7 |
| Նոյեմբերյան | | | | | | 9 | 5.05 | 46.7 | 7368.4 | 980.0 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2016 թվականի չորրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ | | | | |
|--------------------------------------|---|---------------------------|---|--------------|--------|---|---------------------------|--|--------------|--------|
| | Միավորների քանակ | Մակերես (մ ²) | պայմանագրային գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (մ ²) | շուկայական գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Եվագագույն | Առավելագույն | Միջին | | | Եվագագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 4 | 431.0 | 2373.1 | 4282.0 | 3223.9 | 40 | 231746.0 | 130.7 | 22200.0 | 2589.3 |
| Ապարան | | | | | | 9 | 16485.5 | 124.1 | 609.6 | 389.4 |
| Թային | | | | | | 4 | 10315.0 | 63.2 | 1454.8 | 152.5 |
| Ծաղկահովիտ | | | | | | 5 | 14397.0 | 60.0 | 214.3 | 95.0 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 3 | 4299.8 | 253.3 | 565.1 | 387.6 | 34 | 43623.7 | 173.9 | 7140.3 | 904.5 |
| Մասիս | 15 | 2787.8 | 1490.0 | 3901.5 | 2734.9 | 59 | 41161.2 | 187.5 | 25000.0 | 1206.5 |
| Վեդի | 3 | 1179.3 | 664.3 | 1912.0 | 1081.0 | 32 | 33598.3 | 126.1 | 5000.0 | 664.3 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 72 | 85748.6 | 131.6 | 9090.9 | 1215.7 |
| Բաղրամյան | | | | | | 4 | 4000.0 | 100.0 | 833.3 | 240.0 |
| Վաղարշապատ | 1 | 789.0 | 1304.0 | 1304.0 | 1304.0 | 84 | 78272.4 | 197.4 | 26528.4 | 1530.0 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 11 | 9181.1 | 186.6 | 1084.3 | 683.9 |
| Ճամբարակ | | | | | | | | 71.3 | 2286.2 | 147.0 |
| Մարտունի | 1 | 1947.0 | 321.0 | 321.0 | 321.0 | 61 | 69676.9 | 119.3 | 5000.0 | 282.2 |
| Սևան | 6 | 938.5 | 869.5 | 1500.0 | 1341.7 | | | 240.0 | 3110.4 | 347.0 |
| Վարդենիս | | | | | | 8 | 16666.4 | 72.5 | 987.2 | 150.5 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 9 | 251.7 | 3295.9 | 3337.0 | 3302.8 | 2 | 1954.6 | 114.3 | 1388.9 | 217.0 |
| Գուգարք | 6 | 2311.7 | 160.7 | 4978.5 | 1482.0 | 11 | 7760.7 | 77.9 | 14083.3 | 1259.0 |
| Սպիտակ | | | | | | | | 104.9 | 1348.3 | 198.3 |

| | | | | | | | | | | |
|-----------------|----|--------|--------|--------|--------|----|---------|-------|---------|--------|
| Ստեփանավան | | | | | | 1 | 94.0 | 88.2 | 1666.7 | 176.0 |
| Տաշիր | | | | | | | | 45.3 | 400.0 | 90.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Արուվյան | 34 | 7717.5 | 614.2 | 5672.6 | 3461.5 | 68 | 64430.4 | 264.5 | 35353.5 | 1951.1 |
| Եղվարդ | 3 | 2723.5 | 1617.1 | 2488.2 | 2242.2 | 69 | 63952.9 | 173.6 | 27000.0 | 2854.1 |
| Հրազդան | 9 | 3022.6 | 1428.9 | 4976.4 | 2792.3 | 14 | 10787.0 | 117.7 | 34848.5 | 1319.4 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 10 | 2976.8 | 554.4 | 5245.0 | 2022.6 | 9 | 9040.8 | 113.6 | 18750.0 | 333.0 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 72.0 |
| Անի | 2 | 800.0 | 443.7 | 465.0 | 454.4 | 1 | 4770.0 | 67.9 | 180.6 | 216.0 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 65.0 |
| Արթիկ | 3 | 80.0 | 2575.0 | 3392.9 | 3004.5 | 4 | 3714.0 | 111.8 | 5000.0 | 217.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 3 | 3488.0 | 112.2 | 1700.0 | 366.3 |
| Կապան | 6 | 7007.0 | 110.4 | 115.2 | 112.0 | 4 | 4532.0 | 67.9 | 2638.9 | 365.0 |
| Մեղրի | | | | | | 4 | 1990.0 | 68.5 | 632.9 | 270.0 |
| Սիսիան | | | | | | 26 | 21771.9 | 123.5 | 875.0 | 262.0 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 1 | 1829.4 | 244.3 | 244.3 | 244.3 | 7 | 8217.0 | 96.7 | 7659.6 | 507.3 |
| Վայք | | | | | | 1 | 2200.0 | 120.7 | 1448.3 | 250.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 4 | 4608.4 | 75.8 | 810.0 | 129.3 |
| Իջևան | 15 | 6317.0 | 159.5 | 3000.0 | 1148.8 | 8 | 5895.3 | 74.1 | 14423.1 | 505.0 |
| Նոյեմբերյան | | | | | | 3 | 2466.6 | 125.0 | 1948.1 | 257.0 |

2016 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1929 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.1 %-ը:

2016 թվականի չորրորդ եռամսյակում, 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 4.2 %-ով, իսկ 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 2.0 %-ով:

2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 124 բնակարանի, 135 անհատական բնակելի տան, 958 հասարակական նշանակության, 186 արտադրական նշանակության օբյեկտի, 497 միավոր հողի, և 29 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի չորրորդ եռամսյակում Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 10 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 41.2 %-ով, իսկ 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 64.3 %-ով:

2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 3697.40 հա հողից 1.65 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 3695.75 հա հողից 3208.32 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 452.75 հա արդյունաբերական օբյեկտի, 0.03 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 2899.89 հա, որից 2464.71 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի չորրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7158 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 15.1 %-ը: Գրավադրման գործարքից

ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 43.4 %-ով, իսկ 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 22.3 %-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (44.2 %), անհատական բնակելի տների (18.5 %), հասարակական նշանակության օբյեկտների (9.8 %) և հողերի (20.7 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3494 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 23.1 %-ով, իսկ 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 15.7 %-ով:

2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 10719.31 հա հող, որից 10.23 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 516.26 հա կամ 4.8 %-ը գյուղատնտեսական նշանակության են, որից 1.31 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Սյունիքի մարզում՝ 9390.81 հա, որից 9390.73 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր:

2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 469 գործարք, որից 319-ը՝ Երևանում: 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 3.1 %-ով, ընդ որում Երևանում՝ 5.1 %-ով, մարզերում՝ աճել 1.4 %-ով, իսկ 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ աճել է 4.9 %-ով, ընդ որում Երևանում՝ 4.6 %-ով, մարզերում՝ 5.6 %-ով:

2016 թվականի չորրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 6983 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2016 թվականի երրորդ եռամսյակի համեմատ աճել է 25.4 %-ով, իսկ 2015 թվականի չորրորդ եռամսյակի համեմատ՝ 16.9 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.7 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (30.7 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե